«Գրական թերթի» խմբագրության պատվերով «Սովետական Ղարաբաղ» թերթի խմբագիր, արձակագիր Մ. Հովհաննիսյանն օրերս հարցազրույց ունեցավ Ադրբեջանի կոմկուսի ԿԿ մարզկոմի առաջին քարտուղար Հ. Պողոսյանի հետ, որը ներկայացնում ենք մեր ընթերցողներին։

Ա. Ի. Լենինի հուշարձանը Սանֆրանսիսկոյում

ՀԵՆՐԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ. «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԸ ՊԵՏՔ Է ԲԱՐԳԱՎԱՃԻ»

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ. — Ցանկանում եմ սկսել ամենագլխավոր հարցից, որի պատասխանը հետաքրքրում է Լեռնային Ղարաբաղի հայ աշխատավորությանը, ամբողջ հայ ժողովրդին։ Ձեր կարծիքով, ի՞նչ տվեց ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հուլիսի 18-ի որոշումը։ Կուզենայի, որ հատուկ կանգ առնեք հարցի քաղաքական կողմի վրա։

Հ. ՊՈՂՈՍՅԱՆ. — Եկեք վերլուծենք որոշումը։ Լեռնային Ղարաբաղի սոցիալ-տնտեսական զարգացման մասին նախկինում էլ որոշումներ կայացվել են, բայց գործնականում դրանցից ոչ մեկը մինչև վերջ չի իրականացվել։ Բացակայել է վերահսկողությունը, չի եղել մի մարմին, որ հարկադրեր համապատասխան մինիստրություններին, գերատեսչություններին իրագործել դրանք։ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության այս որոշումը համապարփակ է։ Այստեղ կա կետ, որի համաձայն մարզում երկարատև ժամկետով, ըստ որում՝ շատ հեղինակավոր և մեծ լիազորություններով օժտված ներկայացուցիչ է աշխատելու։ Ասենք, որ արդեն ՍՄԿԿ Կենտկոմի անդամ, ՍՍՀՄ Գերագույն սովետի դեպուտատ, ՍՄԿԿ Կենտկոմի բաժնի վարիչ ընկ. Ա. Ի. Վոլսկին անցել է իր բարձր առաքելության կատարմանը։ Ո՞րն է նրա առաքելությունը։ Առաջին՝ հետևելու է մարզի տնտեսական զարգացման վերաբերյալ ՍՄԿԿ Կենտկոմի և կառավարության, ինչպես նաև այլ որոշումների կենսագործմանը։ Եվ երկրորդ՝ կարգավորելու է հնարավոր տարաձայնությունները հանրապետության և մարզի միջև։

Բացի այդ, ՍՍՀՄ Գերագույն սովետի Ազգությունների սովետի դեպուտատների կազմից ստեղծված հատուկ հանձնաժողովը ուսումնասիրելու է Լեռնային Ղարաբաղի պրոբլեմները՝ դրանք հետագա քննարկման ներկայացնելու համար։

Խոսելով որոշման քաղաքական նշանակության մասին, ցանկանում եմ մեջբերել ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովի երդիից այս խոսքերը. «Ես կասեի, որ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության այս օրվա նիստը շատ կարևոր ոլորտներ է մեր վերակառուցման պրոցեսում։ Ավելին, ես այս նիստը կանվանեի պատմական։ Տեսեք, թե Ղարաբաղի պրոբլեմը, ազգամիջյան հարաբերությունների պրոբլեմն ինչհանգրվանում, Մ. Ս. Գորբաչովն ինչպես է անմիջականորեն կապում վերակառուցման հետ։ Խնդրի կարևորության թելադրանքով երկրի ամենաբարձր դեկավար մարմինները հետևողականորեն և հրատապ լուծում են կազմակերպական հարցերը։ Առաջիկա վկայությունը ՍՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության վերջին՝ «Լեռնային Ղարաբաղի հարցի առթով ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ընդունած որոշումն իրագործելու գործնական միջոցառումների մասին» որոշումն է։ Կարծում եմ, այս ամենը նկրկա վերում Լեռնային Ղարաբաղի բազմակողմանի ճանաչումն է։

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ.— Իսկապես։ Թեկուզ այն, որ Լեռնային Ղարաբաղի հարցը քննարկվել է ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հատուկ ընդլայնված նիստում, մարզի աշխատավորության քաղաքական ձեռքբերումներից է։ ՄՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովն իր ելույթում այդպիսի միտք էլ արտահայտեց. «Չի կարելի ամեն մի հարց մեկընդմիշտ լուծված համարել։ Ամեն մի հարց ունի իր դինամիկան, զարգացումը, և դա վերաբերում է նաև ազգային հարաբերությունների հարցին»։ Դրանից կարելի է եզրակացնել, որ Ղարաբաղի աշխատավորության առաջադրած հարցը լուծման առաջին փուլում է։

Հ. ՊՈՂՈՍՅԱՆ. — Անտարակույս։ Ես այնպես եմ դատում. կա գաղափար, այդ գաղափարը ապրում է ժողովրդի մեջ, և ժողովուրդը իրավունք ունի պայքարելու դրա իրականացման համար։ Հարցադրումները, որոնք արտացոլվել են ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության որոշման մեջ, վկայում են խնդրո առարկա հարցի լուծման շարունակական ընթացքը։ Եվ իսկապես, մի՞թե մենք իրավունք չունենք ձգտելու հայ ժողովրդի միավորմանը։ Իհարկե, հաջորդ փուլում գաղափարի համար պայքարի, նրա կենսագործման ձևերը կարող են ընդունել այլ բնույթ, այլ ուղղություն։ Ես լիովին համամիտ եմ ձեր այն կարծիքին, որ հարցը լուծման պրոցեսում է։

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ. — **Պայքարի այն ձևերը, որ վերջին շրջանում ընտրել էր մարզի աշխատավորությունը, արդյո՞ք ճիշտ էին։ Ասենք, գործադուլը...**

Հ. ՊՈՂՈՍՅԱՆ.— Ամեն ինչ պետք է լինի թույլատրելիության սահմաններում, խելամտության և դեմոկրատական հիմունքների սահմաններում, չափի զգացումը չկորցնելու սահմաններում։ Անշուշտ, կարծում ես, վերջին ամիսներին մենք չափն անց էինք կացրել։

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ.—**Շատերի մեջ այն տպավորությունն է ստեղծվել, որ Մ. Ս. Գորբաչովը խիստ մոտեցավ մեր հարցին, մինչդեռ հայ աշխատավորության պահանջն ահա ընթացել է վերակառուցման պահանջներին համապատասխան։**

Հ. ՊՈՂՈՍՅԱՆ.—Ես այդպես չեմ կարծում։ Բանն այն է, որ մենք խնդիր ենք դրել սանդեկ իրավական պետություն։ Դուք գիտեք, որ XIX կուսակցիֆերանում այդ հարցը հիմնական հարցերից էր։ Իրավական պետությունն առաջին հերթին այն պետությունն է, որտեղ օրինականությունը, եթե պարզեցված ասենք, գերտերվում է ամենաբարձր մարդակի վրա։ Նրա առաջ պատասխանատու են բոլորը՝ առանց բացառության։ Այսօրվա մեր գլխավոր օրենքը՝ ՍՍՀՄ Սահմանադրությունը, թույլ չի տալիս այդ հարցը լուծել այնպես, ինչպես մենք էինք առաջադրել։ Մենք կարող ենք ասել և ասում ենք, որ Սահմանադրության մեջ կան հակասություններ, անճշտություններ, բայց, ցավոք, դա է գործող օրենքը և շրջանցել չենք կարող։ Բացի, իհարկե, օրենքները պետք է վերանայվեն, պետք է կատարելագործվեն։ Սահմանադրությունը պետք է Սահմանադրությունը ժառայի ժողովրդին, մարդկանց և ոչ թե հակառակ նրանց շահերին։ Ես գտնում եմ, որ մեր Սահմանադրության մեջ տեղ գտած հակասությունները ժամանակի ընթացքում կշրջակ վեն, և ճանապարհ կբացվի Ղարաբաղի հարցի սահմանադրական լուծման համար։

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ.—Ձեր ասածից ծագում է որոշակի պահանջ ՍՍՀՄ Գերագույն սովետում մեր դեպուտատների նկատմամբ. նրանք պարտավոր են ըստ ամենայնի ներկայացնել ժողովրդի առաջադրած խնդիրները և պաշտպանել դրանք։ Ի վիճակի՞ են նրանք այդ անելու։

Հ. ՊՈՂՈՍՅԱՆ.— Եթե մենք դեպուտատ ընտրենք այն մարդկանց, ովքեր, իրոք, ցանկանում են իրենց կյանքը նվիրել ժողովրդին, պայքարել աշխատավորների շահերի և, ամբողջությամբ վերցրած, երկրի շահերի համար՝ այո, ի վիճակի կլինեն։ Իսկ եթե մենք դեպուտատ ենք ընտրելու առաջվա կանոններով, վերևից իջեցված կարգադրագրերով, իհարկե, էական ու խելամիտ որևէ բանի չենք հասնի։

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ.— Ընկեր Պողոսյան, **ձեր դիտողության առթիվ ահա թե ինչ կուզենայի ասել։ ՍՍՀՄ Գերագույն սովետում մենք պետք է ունենանք մեր դեպուտատին, մարզի շահերը պաշտպանող դեպուտատին։ Վստա՞հ եք, որ մեզ չեն պարտադրի «դըրսի» թեկնածուներ։ Սա շատ կարևոր է, որովհետև եկող տարի տեղի են ունենալու երկրի բարձրագույն մարմինների ընտրությունները։**

Հ. ՊՈՂՈՍՅԱՆ.— Հուսով եմ՝ ժողովուրդը կընտրի այն մարդկանց, ում ցանկանում է, հավատում ու վստահում։

Ես այն կառուցիքին չեմ, որ մարզի սահմաններից դուրս ապրող դեպուտատը չի կարող պաշտպանել մարզի շահերը։ Ամեն ինչ կախված է մարդուց և մեր ընտրությունից։ Իսկ ինչո՞ւ մոսկվացին չի կարող պաշտպանել մեր շահերը։ Ինչո՞ւ եք այդպես կարծում։ Ես գտնում եմ, որ կարող է պաշտպանել, բայց պետք է ընտրել այնպիսի մարդու, որը հոգով ցավի մեր գործերի համար, պաշտպանի մեր առաջադրած հարցերը, որոնք, կրկնում եմ, չեն հակասում երկրի բնական շահերին։

Ընտրության կարգը փոխվում է, պետք է առաջադրվեն մի քանի թեկնածուներ։ Ուրեմն, ընտրությունն իհարկե, ընտրության հնարավորություն է լինելու։ Աչքալուս նախկինի պես կուսակցության մարզկոմը չի որոշելու և լուծելու դեպուտատի հարցը։ Միայն երաշխավորելու է թեկնածուներին, որոնց ցուցակը լայնորեն քննարկվելու է կոլեկտիվներում։ Ընտրողները հնարավորություն են ունենալու ճանաչելու և նոր միայն որոշելու, թե ում օգտին քվեարկեն։ Պատահական մարդ չպիտի ընտրվի։

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ. — **Հայտնի կարգախոսը պետք է վերագտնի իր նախնական իմաստը՝ դեպուտատը ժողովրդի ծառան է։**

Հ. ՊՈՂՈՍՅԱՆ.— Ճիշտ ուրեմ անշահախնդիր ծառան։

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ.— **Դուք ինչպե՞ս եք պատկերացնում Հայկական ՍՍՀ-ի մասնակցությունը մարզի սոցիալ-տնտեսական և հոգևոր-մշակութային կյանքի հետագա զարգացմանը։ Հայկական ՍՍՀ-ն կարո՞ղ է մարզի կյանքին մասնակցել, ասենք, մշակութային բնագավառում, իսկ եթե պետք է սոցիալական հարց լուծել կամ ֆինանսական միջոցներ ներդնել, ստացվում է, որ Հայաստանը պետք է զոհողության գնա։**

Հ. ՊՈՂՈՍՅԱՆ.— Մենք ֆինանսական օգնության պահանջ չունենք։ Այսօր էլ մարզը կարող է միանգամայն հանգիստ անցնել տնտեսավարկի։ Օգնությունը Հայկական ՍՍՀ-ից կարող է այս ձևով լինել. ասենք, կարող է ակտիվորեն մասնակցել կապալային շինարարությանը, մարզի ճարտարապետական հուշարձանների վերականգնմանը, նախագծային-հետազոտական աշխատանքներին և այլն։ Աշխատանքի բնագավառներն անսահմանափակ են։

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ.—Շատ գեղեցիկ գաղափար է։

Հ. ՊՈՂՈՍՅԱՆ.— Ստեփանակերտում ցանկանում ենք կառուցել մշակույթի պալատ։ Ազգային, հայկական տոնով։ Հայաստանում շինարարական առաջավոր փորձ կա, կան ինստիտուտներ, որոնք կարող են մեզ համար տեխնոլոգիաներ մշակել, ասենք, Ղարաբաղսկոմբինատի, Լեկտրատեխնիկական գործարանի համար։

Մշակույթի ապարատում առնելիքները շատ են։ Ղարաբաղի մշակույթը անջատ չի Հայաստանի մշակույթից։ Մենք ունենք մեկ՝ հայ ազգային մշակույթ։

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ. — **ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության որոշման մեջ և հատկապես Մ. Ս. Գորբաչովի ելույթում նշվեց, որ Լեռնային Ղարաբաղի պրոբլեմը կապված է Ադրբեջանի դեկավար մարմինների թույլ տված լուրջ խախտումների հետ։ Սա խիստ գնահատական է։ Մ. Ս. Գորբաչովն իր ելույթում պահանջեց երաշխիքներ՝ ընդունված որոշումները կատարելու համար։ Արդյո՞ք պրակտիկայում չեն կրկնվի նախկին սխալները ԼՂԻՄ-ի նկատմամբ։**

Հ. ՊՈՂՈՍՅԱՆ. Չեմ կարծում։ Չեն կրկնվի։ Որովհետև ՄՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ներկայացուցչի հիմնական պարտականությունն է իրագործել ընդունված բոլոր որոշումները։ Բացի այդ, փոխվում է հանրապետության ղեկավարությունը, հետևաբար, պետք է փոխվի նաև վերաբերմունքը։ Հետո, հատուկ ընդգծում եմ, որոշումների իրագործումը առաջին հերթին մեզնից է կախված։

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ. — **Ինչպե՞ս եք գնահատում ԼՂԻՄ-ին ինքնավար հանրապետության կարգավիճակ տալու հնարավորությունը։ Դա ի՞նչ կարող է տալ մեզ։**

Հ. ՊՈՂՈՍՅԱՆ.—Շատ բարձր եմ գնահատում։ Ինչ է տալո՞ւ... Առաջինը՝ ինքնավար հանրապետությունն ավելի շատ ինքնուրույնություն և ավելի շատ իրավունքներ ու հնարավորություններ ունի, քան ինքնավար մարզը։ Իսկ ազգային հարցի վերաբերյալ ՄՄԿԿ Կենտկոմի առաջիկա պլենումից հետո, իմ կարծիքով, ինքնավար միավորումների և, առաջին հերթին, ինքնավար հանրապետությունների իրավունքները զգալիորեն կընդլայնվեն։ Գործնականում դա լրիվ ինքնուրույնություն կտա տեղական արդյունաբերությանը, թեթև արդյունաբերությանը, որոնք կան մեզ մոտ, այսինքն՝ դրանք հորիզոնական ձևով ենթարկվելու են մեր Մինիստրների խորհրդին (և թե ինքնավար հանրապետությունն դառնանք, ունենալու ենք Մինիստրների խորհուրդ)։ Նյութատեխնիկական մատակարարումը լինելու է ուղղակի, այսինքն՝ ենթադրվող հանրապետության տարածքում գտնվող բոլոր ձեռնարկությունների ֆոնդերը յուրացվելու են տերիտորիալ մատակարարող ների կողմից։ Մենք կարող ենք ուղղակի տնտեսական և այլ կապեր որոնել բոլոր մեր հանրապետության, հանրապետությունից դուրս։ Օրինակ, Անդրկովկասի մյուս հանրապետությունների, ՌՍՖՍՀ-ի հետ և այլն։ ՍՍՀՄ Գերագույն սովետում մեր ներկայացուցիչները կնստեն 11-ի։ Կան նաև ուրիշ առավելություններ։

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ.—Նրշանակում է՝ **ինքնավար հանրապետությունը շատ լավ է։**

Հ. ՊՈՂՈՍՅԱՆ.— Ես այդպես չասացի։ Ասացի՝ ինքնավար հանրապետությունը ավելի լավ է, բան ինքնավար մարզը, անհամեմատ լավ է։

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ.—**Գերագույն սովետի նախագահության նիստից ի՞նչ տրամադրությամբ էիք վերադառնում թեթևացա՞ծ, ծանր հոգո՞վ, թե՞ իրարամերժ զգացումներով։**

Հ. ՊՈՂՈՍՅԱՆ. — Իրարամերժ զգացումներով, որովհետև մենք հարցը այդ կերպ էինք դրել։ Բայց երկարատև խոր վերլուծելուց հետո նկատ այն եզրակացության, որ մեր նվաճումները քիչ չեն, կարելի է այդ բազայի վրա աշխատել, ուժեղացնել, զարգացնել մարզի տնտեսական պոտենցիալը։ Պետք է հաշվի առնել և այն, որ ժամանակն աշխատում է մեր օգտին։

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ.—**Եթե ծրագիրն իրականացվի, ինչպե՞ս եք պատկերացնում մարզը մոտ ապագայում։**

Հ. ՊՈՂՈՍՅԱՆ.—Շատ զորեղ։ Վերակառուցման, տնտեսական հեղափոխությունների ժամանակներում մարզը թափով է զարգանալու։ Այդ յուրաքերությունը զարգանալու է ոչ միայն Ստեփանակերտում, այլև շրջաններում։ Այդ ձևով մարդկանց արտահոսքը մարզից կկանխվի։ Եթե մինչ այդ համարվել ենք ագրարային-արդյունաբերական ռեգիոն, ապա կդառնանք արդյունաբերական-ագրարային ռեգիոն։

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ.—**Իմ կարծիքով, անձնական հարաբերությունները երբեմն մեծ նշանակություն են ձեռք բերում այս կամ այն հարցի լուծման ժամանակ։ Մեր ընթերցողների համար հետաքրքիր է իմանալ, թե ինչպիսի հարաբերություններ են ստեղծվել ձեր և Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ս. Գ. Հարությունյանի միջև։ Ես ձեզ չեմ մղում հաճոյախոսության, ես գործնականություն եմ ակնկալում։ Ի դեպ, հույս ունեմ, որ առիթ կունենամ այս հարցը տալ նաև ընկեր Հարությունյանին։**

Հ. ՊՈՂՈՍՅԱՆ.— Ես մեծ հարգանք ունեմ Սուրեն Գուրգենովիչի նկատմամբ՝ նրա խագահության որոշման մեջ և թյունում և հանրապետությունում։ Օրինակ, Անդրկովկասի մյուս հանրապետությունների, ՌՍՖՍՀ-ի հետ և այլն։ ՍՍՀՄ Գերագույն սովետում մեր ներկայացուցիչները կնստեն 11-ի։ Կան նաև ուրիշ առավելություններ։

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ.—**Նրշանակում է՝ ինքնավար հանրապետությունը շատ լավ է։**

Հ. ՊՈՂՈՍՅԱՆ.— Ես այդպես չասացի։ Ասացի՝ ինքնավար հանրապետությունը ավելի լավ է, բան ինքնավար մարզը, անհամեմատ լավ է։

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ.—**Գերագույն սովետի նախագահության նիստից ի՞նչ տրամադրությամբ էիք վերադառնում թեթևացա՞ծ, ծանր հոգո՞վ, թե՞ իրարամերժ զգացումներով։**

Հ. ՊՈՂՈՍՅԱՆ. — Իրարամերժ զգացումներով, որովհետև մենք հարցը այդ կերպ էինք դրել։ Բայց երկարատև խոր վերլուծելուց հետո նկատ այն եզրակացության, որ մեր նվաճումները քիչ չեն, կարելի է այդ բազայի վրա աշխատել, ուժեղացնել, զարգացնել մարզի տնտեսական պոտենցիալը։ Պետք է հաշվի առնել և այն, որ ժամանակն աշխատում է մեր օգտին։

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ.—**Եթե ծրագիրն իրականացվի, ինչպե՞ս եք պատկերացնում մարզը մոտ ապագայում։**

Հ. ՊՈՂՈՍՅԱՆ.—Շատ զորեղ։ Վերակառուցման, տնտեսական հեղափոխությունների ժամանակներում մարզը թափով է զարգանալու։ Այդ յուրաքերությունը զարգանալու է ոչ միայն Ստեփանակերտում, այլև շրջաններում։ Այդ ձևով մարդկանց արտահոսքը մարզից կկանխվի։ Եթե մինչ այդ համարվել ենք ագրարային-արդյունաբերական ռեգիոն, ապա կդառնանք արդյունաբերական-ագրարային ռեգիոն։

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ.—**Իմ կարծիքով, անձնական հարաբերությունները երբեմն մեծ նշանակություն են ձեռք բերում այս կամ այն հարցի լուծման ժամանակ։ Մեր ընթերցողների համար հետաքրքիր է իմանալ, թե ինչպիսի հարաբերություններ են ստեղծվել ձեր և Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ս. Գ. Հարությունյանի միջև։ Ես ձեզ չեմ մղում հաճոյախոսության, ես գործնականություն եմ ակնկալում։ Ի դեպ, հույս ունեմ, որ առիթ կունենամ այս հարցը տալ նաև ընկեր Հարությունյանին։**

Հ. ՊՈՂՈՍՅԱՆ.— Ես մեծ հարգանք ունեմ Սուրեն Գուրգենովիչի նկատմամբ՝ նրա կուսակցական մկրտությունը։ Հասարակապես բարձր եմ գնահատում նրա հատատակամությունը։ Լեռնային Ղարաբաղի հարցում։ Ինձ վրա խոր տպավորություն է թողել նրա՝ որպես քաջաբաքան գործչի, արժանապատիվ պանվածքը։ Կարծում եմ, հանձին ընկեր Հարությունյանի մայր Հայաստանն ունի պատկական բարձր մտածողության տեր կուսակցական լիդեր, որին Հայաստանի համար այդ դժվար ժամանակաշրջանում պետք է ամեն կերպ աջակցել։ Դրանում մենք շանագրգռված ենք ոչ միայն որպես հայ։ Այստեղ մեր գործերի վիճակը շատ լավ կապված է լինելու նաև Հայաստանի գործերի վիճակից։

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ.—**Բոլորիս հուզող հարց է ճանապարհների հարցը։**

Հ. ՊՈՂՈՍՅԱՆ.— Գրանով զբաղվում ենք։ Այդ են նախագծեր ենք պատրաստում։ Մայրուղիներ կկառուցենք Ղարաբաղի միջով, ծայրից ծայր։ Մոտավորապես այսպիսի ուղեգծով՝ Հադրութ-Կարմիր շուկա—Սեղդիշեն — Մարտակերտ —Թալիշ։ Մա գրողոց ճանապարհները կլինեն դեպի գյուղերը։

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ.—**Դա ինձ պատկերանում է հրաշքի պես։**

Հ. ՊՈՂՈՍՅԱՆ.—Եթե ունենայինք այդպիսի ճանապարհներ, անցած ամիսներին չէր խախտվի շրջանների հետ մարզկենտրոնի կապը։

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ. — **Իսկ տեխիկայի հա՞րցը։**

Հ. ՊՈՂՈՍՅԱՆ.— Դրվածվի։ Անպայմա՞ն։

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ. — **Ինչպե՞ս եք պատկերացնում «Գրական թերթի», «Սովետական Ղարաբաղի» և ընդհանրապես մամուլի դերը այս խնդիրների իրագործման ապարեզում։**

Հ. ՊՈՂՈՍՅԱՆ. — Դուք դա պետք է ավելի լավ պատկերացնեք։ Իմ կարծիքով, թերթը պետք է ոգեորվի մեր ծրագրերով, անելիքներով։ Կարևորը ոգեորվելը և որոշելն է՝ մեր աշխատավորությանը ոգեորել է։ Եթե ուզում ենք մարզը զարգացնել, յուրաքանչյուրի հոգան ու ցավը բոլորիս պետք է լինի։

Այսօր կարևոր է, որ աշխատենք առանց մեզ խնայելու, աշխատանք խելոք, մտածված, համառ նպատակասլացությամբ։ Իսկ նպատակը բարգավաճած, ծաղկուն Ղարաբաղն է, մեր հինավուրց արցախական աշխարհի նորա ստեղծումը։

Ա. Ի. Լենինի հուշարձանը Սանֆրանսիսկոյում